ՁԵՎ N 2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը. Վլադիմիր Ասեյան

2. Զբաղեցրած պաշտոնը. ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության ԵՏՄ մաքսային քաղաքականության և օրենսդրական կարգավորման բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները. ք. Վիեննա, Ավստրիա, 2023 թվականի սեպտեմբերի 11-ից 15-ը ներառյալ

4. Հրավիրող կողմը (առկայության դեպքում). Ավստրիայի ֆինանսների դաշնային նախարարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). Գործուղման նպատակը «Հարկման համակարգի հեռանկարները» թեմայով դասընթացին մասնակցությունն էր, որի նպատակը համաշխարհային հարկային համակարգում կատարվող փոփոխություններին ծանոթություն էր (ստացված նոր գիտելիքները կծառայեն աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում):

6. Քննարկված թեմաները (հարցերը).

Քննարկվել են հետևյալ թեմաները.

- Հարկային արդի հիմնախնդիրները և հարկային բարեփոխումների խթանները,
- Հարկային համակարգերը Վիեննայի միացյալ ինստիտուտի տարածաշրջանում,
- Հարկային համակարգեր զարգացող տնտեսություններում, հարկային համակարգերի նպատակները, միջազգային և տարածաշրջանային միտումներ ու թվեր, առաջիկա մարտահրավերներ
- Ավստրիայի հարկային համակարգի կառուցվածքը, հիմնական բարեփոխումներ, մարտահրավերներ

➢ Ժամանակակից հարկային վարչարարություն. սկզբունքներ, տարրեր, մարտահրավերները տարածաշրջանում

➢ Միջնաժամկետ եկամուտների ռազմավարություն

➢ Հարկային վարչակազմի ախտորոշիչ գնահատման գործիք (TADAT)

➢ Ներդրումների վրա նվազագույն հարկերի ազդեցության ուսումնասիրությունը տարածաշրջանում

➢ Տրանսֆերային գնագոյացում

➢ Վստահության և համապատասխանության ռիսկերի կառավարում, խոշոր հարկ վճարողների ծրագիր

➢ Ապօրինի ֆինանսական հոսքերի դեմ պայքարի միջգերատեսչական համագործակցություն

➢ Հարկում և ներառական աճ

➢ BEPS և բազմակողմ գործիքներ

➢ ԱԱՀ-ի միջսահմանային վեճեր. պատճառներ և լուծումներ

➢ Աձխածնի գնագոյացման հարցեր և հարկման համակարգեր

➢ Հարկումը և անհավասարությունը

➢ Հարկային որոշակիությունը

7. Հանդիպումները, ելույթները.

Դասընթացի սկզբում նախատեսված էր մասնակիցների կողմից իրենց երկրների հարկային համակարգերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում: Իմ կողմից ներկայացվել է Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը, կառուցվածքը, առանձնահատկությունները, կատարված բարեփոխումները և պլանավորված բարեփոխումների ուղղությունները:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածություն-ները, ստորագրված փաստաթղթերը.

---

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Դասընթացի ընթացքում ձեռք բերված գիտելիքները հնարավորություն կտան օգտագործելու միջազգային առաջադեմ փորձը եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության մշակման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու հարցում:

Գործուղվող ---------- 19 սեպտեմբերի 2023թ.

(ստորագրությունը, ամսաթիվը)